

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/9**

**18 նոյեմբերի 2014 թ.**

Քննարկվեց քաղաքացի Աղասի Հովհաննիսյանի 28.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ ՕԿ և ՆԱԳՎ ՕԿՎ 22.09.2014 թ-ի թիվ 1411859 վարչական ակտի դեմ:

#### **Քաղաքացի Աղասի Հովհաննիսյանի գանգատում բերված փաստարկները.**

2014 թ-ի սեպտեմբերի 19-ին կազմված թիվ 1411859 արձանագրությամբ, որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողի, Աղասի Հովհաննիսյանին (այսուհետ նաև գանգատաբեր) տուգանել են 200.000 դրամ, իբրև նրա կողմից Բուզանդի փոխոցի մի հատվածում ավտոկայանատեղի գործունեություն իրականացնելու համար:

Աղասի Հովհաննիսյանը նշում է, որ 1989 թ-ից հաշվառված է հոգեբուժարանում, 1-ին կարգի հաշմանդամ է և միակ եկամուտը հաշմանդամության թոշակն է: Գանգատաբերը նշում է նաև, որ ավտոհսկիչ չէ, ուղղակի երբեմն առողջական վիճակից ելնելով լինում է Բուզանդի փոխոցում, քայլելու և նստելու համար, որիովետև այդտեղ է բնակվում իր քույրը, որին այցելում է օգնություն ստանալու համար:

Ըստ գանգատի, ոստիկանության աշխատակիցները գանգատաբերին բերման են ենթարկել ոստիկանություն, որտեղ ինչ-որ բան են գրել և ստիպել, որպեսզի գանգատաբերը ստորագրի այն: Գանգատաբերը հիմք ընդունելով ոստիկանության աշխատակիցների պնդումներն այն մասին, որ որևէ վտանգավոր բան չկա և գումարի հետ չի առնչվում, առանց կարդալու ստորագրել է:

Հաշվի առնելով, որ ապօրինի ավտոկայանատեղու հսկիչ գործունեությամբ չի զբաղվել, գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել թիվ 1411859 վարչական ակտը, քանի որ վերջինումս արձանագրված տվյալները չեն համապատասխանում իրականությանը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

ՀՀ ՖՆ ՕԿ և ՆԱԳՎ ՕԿՎ 22.09.2014 թ-ի թիվ 1411859 վարչական ակտով (այսուհետ նաև վարչական ակտ) մասնավորապես արձանագրվել է, որ Երևան քաղաքի Վերնիսաժ տոնավաճառի հարևանությամբ գտնվող «Պրոմեթեյ» բանկի դիմաց ֆիզիկական անձ Աղասի Մարտինի Հովհաննիսյանն առանց համապատասխան պետական գրանցման, առանց հարկային մարմիններում հաշվառման շուրջ մեկ ամիս իրականացրել է ավտոկանգառի գործունեություն, որի ընթացքում ստացել է 60.000 դրամ համախառն եկամուտ:

Վերոգրյալի վերաբերյալ Աղասի Հովհաննիսյանը տվել է գրավոր հայտարարություն: Արդյունքում վարչական ակտով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 200.000 դրամ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ոստիկանության կենտրոնական բաժնի Հ/Ո բաժանմունքում Աղասի Հովհաննիսյանը տվել է բացատրություն, որի վերաբերյալ 29.07.2014 թ-ին կազմվել է արձանագրություն: Վերջինումս Աղասի Հովհաննիսյանը մասնավորապես նշել է, որ 29.07.2014 թ-ին ժամը 10:45-ի սահմաններում գտնվել է Վերնիսաժ տոնավաճառի հարևանությամբ գտնվող «Պրոմեթեյ» բանկի դիմաց և զբաղվել է ապօրինի ավտոկայանատեղիով: Այդ պահին իրեն է մոտեցել ոստիկանության աշխատակիցը և ապօրինի ավտոկայանատեղիով զբաղվելու կասկածանքով տարել է ոստիկանության բաժին: Աղասի Հովհաննիսյանը նշել է նաև, որ նշված աշխատանքով զբաղվում է մոտ մեկ ամիս և օրական աշխատել է հազար դրամ, ինչպես նաև, որ որևէ անձի գումար չի տվել, իսկ ստացված գումարը օգտագործել է իր ընտանիքի կարիքների համար: Ըստ արձանագրության, բացատրությունը գրվել է Աղասի Հովհաննիսյանի ձեռքով, ճիշտ է, որի համար վերջինս ստորագրել է:

Հարկ է նշել նաև, որ 19.09.2014 թ-ին Աղասի Հովհաննիսյանը գրավոր հայտարարություն է տվել նաև ՀՀ ՖՆ ՕՀՎ 10-րդ բաժնի աշխատակիցներին, որով ևս մեկ անգամ հաստատել է «Պրոմեթեյ» բանկի շրջակայքում մոտ մեկ առանց պետական գրանցման, առանց հարկային մարմնում հաշվառման կանգնելու մոտ ամիս որպես ավտոկայանատեղու հսկիչ աշխատելու և եկամուտ ստանալու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ հիշատակված փաստական հանգամանքները հիմնավորում են Աղասի Հովհաննիսյանի կողմից ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հանգամանքը, ինչը և հիմք է հանդիսացել վարչական ակտով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ ՕՀ և ՆԱԳՎ ՕՀՎ 22.09.2014 թ-ի թիվ 1411859 վարչական ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

  
  
Վ.Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ